ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՍԱՐԳԻՍ ՊՈՐԱՆՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՁԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ՊՈՐԱՆԵԱՆ ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՁԵԼՈՍ, Ի ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Մեզի համար ուրախութեան առիթ եղաւ իմանալ Ամերիկահայոց Արևմտեան Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանէն, որ երկար տարիներէ ի վեր Դուք, հանդերձ ընտանեօք, լծուած էք մեր Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ ծառայութեան, յատկապէս Վան Նայսի Ս. Պետրոսի եկեղեցական համայնքին բերելով Ձեր գործօն մասնակցութիւնը և Առաջնորդարանի թեմական գործունէութեանը ընծայելով Ձեր ամբողջական և անվերապահ մասնակցութիւնը:

Բացի վարչական-կազմակերպական աշխատանքներէ, Դուք և Ձեր ընտանիքի անդամները նուիրուած աշխատանքով կը նպաստէք մեր ժողովուրդի մանաւանդ նոր սերունդի կրօնական առողջ դաստիարակութեան Կիրակնօրեայ Վարժարաններու միջոցաւ:

Ի գնահատութիւն Ձեր եկեղեցասէր և կրթանուէր բազում ծառայութեանց՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր Ս. Եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի **Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ** *շքանշանը:*

Կ'աղօթենք առ Աստուած, որ Ձեզի և Ձեր Տիկնոջ ու զաւակներուն պարգևէ քաջառողջ և երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասը ընծայել մեր պաշտելի Եկեղեցիին և ազգին և յարաճուն պտղաբերութեամբ արժանի ըլլաք Աստուծոյ օրհնութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 26 Մարտի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/ 82: